ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МАРЗПЕТ АРМАВИРА

<< 31 >> ----------08----------2015թ. N 01/08/3106-15

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՈՒՂԵՐՁԸ ԳԻՏԵԼԻՔԻ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Սիրելի՛ դպրոցականներ, մանկավարժներ ու ծնողներ,

Շնորհավորում եմ բոլորիդ Գիտելիքի և դպրության օրվա կապակցությամբ:

Տարվա օրերի մեջ սեպտեմբերի 1-ն առանձնանում է՝ ալեկոծելով դպրոցականի, ուսուցչի, ծնողների, բոլորիս սրտերն ու հոգիները, սկսվում է հույսերով լի ուսումնական տարին, գիտելիքներով հարստանալու ու նոր արժեքներ ճանաչելու շրջանը: Այն անփոխարինելի տոն է, որ ուղեկցել և ուղեկցելու է մեզնից յուրաքանչյուրին՝ ողջ կյանքում:

Ամեն տարի այս օրը մենք դիմավորում ենք առանձնահատուկ հանդիսությամբ, քանզի գիտելիքի ու կրթության նկատմամբ սերը և ձգտումը հազարամյակներ շարունակ եղել են հայ ժողովրդի գերագույն արժեքներից մեկը: Այն նաև երկրի զարգացման ու հզորացման կարևորագույն գրավականն է: Պետության վաղվա օրը երաշխավորված է, եթե հասարակությունը կրթված է: Այս ամենն առավել ևս կարևորվում է ներկայումս, երբ կայացած անհատը դառնում է հասարակության շարժիչ ուժը:

Պետության մտահոգությունը՝ արդի աշխարհում բազմակողմանի զարգացած, պատշաճ կրթություն ստացած, ազգային արժեքներ կրող և պետականության զգացումով քաղաքացիների դաստիարակումն է: Այս ճանապարհին դեռևս բավականին անելիքներ կան: Մենք բոլորս քաղաքացիական բարձր պատասխանատվություն ունենք մասնակցելու հայրենասեր, բանիմաց ու կիրթ հասարակության կայացմանը: Իրականացվող բարեփոխումների, ամենօրյա շահագրգիռ աշխատանքի արդյունքում, հուսով եմ, այս հարցում հաջողություններ կունենանք:

Համոզված եմ, որ ձեռքբերվող գիտելիքները, հայեցի կրթությունն ու ազգային արժեքների ոգով դաստիարակությունը կնպաստեն սեփական ունակությունների ու կարողությունների դրսևորմանը:

Ի սրտե շնորհավորում եմ այն մանուկներին, ովքեր այսօր առաջին անգամ են ոտք դնում դպրոց: Այսօրվանից ձեզ համար մի նոր կյանք է սկսվում՝ գիտելիքների զարմանահրաշ աշխարհի բացահայտման ժամանակաշրջանը: Իմ ջերմ բարեմաղթանքներն եմ հղում ու ցանկանում, որ ուսումնառության ողջ ընթացքը նրանց համար լինի աշխարհաճանաչման ու ինքնադրսևորման ժամանակաշրջան: Յուրաքանչյուր աշակերտ մի ջահ է, որը պիտի բոցավառվի գիտելիքի նկատմամբ սիրով ու սովորելու անսպառ ցանկությամբ:

Հարգարժա՛ն մանկավարժներ

Այսօր, անկախ դժվարություններից, ձեր ուսերին է բարդ ու պատասխանատու այս առաքելությունը: Շնորհավորում եմ Ձեզ և մաղթում եմ անձնական մեծագույն երջանկություն, որ կարողանաք անթերի նվիրվել ձեր աշխատանքին:

Ջերմորեն շնորհավորելով բոլորիս նոր ուսումնական տարվա սկիզբն ավետող սեպտեմբերի 1-ի և Գիտելիքի օրվա կապակցությամբ՝ մաղթում եմ մեր դպրոցականներին և ուսանողներին լուսավոր ճանապարհ, բարձր առաջադիմություն, մեծ ձգտում և աշխատասիրություն, ցանկանում եմ հետաքրքիր, հայտնություններով հարուստ ու հաջողություններով լի ուսումնական տարի՝ հավատով, որ ամեն մի դժվարություն կհաղթահարվի բոլորիս ամենօրյա ջանքերով:

ՄԱՐԶՊԵՏ՝ *Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ*